



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2022 թ.

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀՀԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3>>
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՀՐԱԶՅԱ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.03.2022թ. գրության

Հարգելի Հրաչյա Պապիկյան

Ձեզ է ներկայացվում տեղեկատվություն համաձայն վերոնշյալ գրությամբ նշված
հարցերի:

Առդիր 1 ֆայլ:

25/03/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝

Ա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տեղեկատվություն

Հարց- Ավարտված են արդյոք մարզում անասնազխաքանակի հաշվառման աշխատանքները:

Պատասխան- Այո:

Հարց- Ի՞նչ արդյունքներ են գրանցվել ըստ կենդանիների տեսակների:

Պատասխան- 2022թ. հունվարի 1-18-ը ընկած ժամանակահատվածում մարզում իրականացված անասնազխաքանակի հաշվառման արդյունքներն են՝

h/h	Անվանում	2022թ. գլուխ
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ որից՝ կովեր	72049 36262
2	Մանր եղջ. կենդ. Որից՝ ոչխարներ այծեր	30 588 28837 1751
3	Խոզեր	11953
4	Թռչուններ	311051
5	Մեղվաընտանիքներ	20948
6	Ձիեր	2696

Հարց - Կա՞ր արդյոք վերլուծություն-համեմատություն նախորդ տարիների համեմատությամբ, նվազել թե ավելացել է մարզում անասնազխաքանակը:

Պատասխան- Մարզում 2022թ.-ին 2021թ.-ի համեմատությամբ՝

Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը պակասել է 2625 գլխով, կամ 3.5 տոկոսով:

Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը ավելացել է 4282 գլխով, կամ 14 տոկոսով:

Խոզերի գլխաքանակը պակասել է 959 գլխով, կամ 7.4 տոկոսով:

Թռչունների գլխաքանակը ավելացել է 44 841 թևով, կամ 14.4 տոկոսով:

Մեղվաընտանիքների քանակը պակասել է 2794-ով, կամ 11.7 տոկոսով:

Ձիերի գլխաքանակը ավելացել է 38 գլխով, կամ 1.3 տոկոսով:

Լոռու մարզի 2022թ-ի անասնագլխաքանակի համեմատականը 2021թ-ի նկատմամբ (հունվարի 1-ի դրությամբ) վիճ. ծառայության տվյալներ

h/h	Անվանում	2022թ. գլուխ	2021թ. գլուխ	Համեմատական	
				գլուխ	%
1	Խոշոր եղջերավոր, կենդանիներ որից՝ կովեր	72049	74 674	-2625	-3,5
		36262	36849	-587	-1.6
2	Մանր եղջ. կենդ. Որից՝ ոչխարներ այծեր	30	26 306	+4282	+14.0
		588	24 623	+4215	+14.6
		28837	1683	+68	+3.9
		1751			
3	Խոզեր	11953	12 912	-959	-7.4
4	Թռչուններ	311051	266 210	+44 841	+14.4
5	Մեղվաընտանիք	20948	23 742	-2 794	-11.7
6	Ձիեր	2696	2 658	+38	+1.3

Հարց- Ի՞նչ նպատակ էր հետապնդում վիճակագրական ծառայություններին զուգահեռ սեփական ուսումնասիրություն իրականացնելը և ի՞նչպես են օգտագործվելու ստացված տվյալները:

Պատասխան- Մարզպետարանը մարզում անասնազխաքանակի համատարած հաշվառման նպատակով սեփական ուսումնասիրություններ չի իրականացնում, այլ հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականը, համագործակցելով ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ՝ համակարգում է գործընթացը:

Անասնազխաքանակի հաշվառման տվյալները օգտագործվում են մի շարք նպատակներով, այդ թվում՝

- Տրամադրվում է ՀՀ կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային ծառայությանը՝ պետական պատվերի շրջանակներում մարզում իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումները պլանավորելու նպատակով:
- Օգտագործվում է գյուղատնտեսության ոլորտում պետական ծրագրերի իրականացման գործընթացում:
- Տրամադրվում է մարզում գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող արտասահմանյան դոնոր կամ այլ կազմակերպություններին: